

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2022-5-4-Ա

ք. Երևան

14.04.2022թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի ապրիլի 14-ի նիստում քննարկեց 2021 թվականի օգոստոսի 16-ին լիազորված անձ Սամվել Ալեքսանյանի կողմից ներկայացված՝ «Ալարտ» ՍՊԸ ընկերության (Երևան, Այգեստան 1-ին նրբ. տուն 14, AM) «EL TORRO THE MEAT BAR» (No20201741) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.  
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը շփոթելու աստիճան նման է նույնատիպ ծառայությունների համար Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող «TORO SPANISH SPIRIT» (RICO FOODS S.L., C.C. Guadalmina Alta, Blq Barclays Bank, 1a planta, 29678 San Pedro de Alcantra Malaga, Spain (ES), N 22045, 10.10.2014թ.) համակցված ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 122-րդ կետի 10-րդ ենթակետի, 130-րդ, 132-րդ, 133-րդ կետերի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման են համարվում համակցված ապրանքային նշանները և ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցն առանձին վերցված, եթե դրանց մեջ տվյալ տարրերը

հանդիսանում են հիմնական ընկալման տարրեր կամ տվյալ նշանների՝ այսպես կոչված «առաջնային ընկալման» տարրեր կամ «անվանումներ»: Համակցված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե առկա է ավելի վաղ առաջնության թվական ունեցող իրավական պահպանություն ստացած ապրանքային նշան, որի հիմնական ընկալման բառային տարրը շփոթելու աստիճանի նման է հայտարկված նշանի հիմնական ընկալման բառային տարրին, այդ թվում՝ նաև այն դեպքերում, երբ այդ բառային տարրերը գրված են տարբեր լեզուներով: Տվյալ դեպքում նման տարրեր են հանդիսանում համեմատվող ապրանքային նշաններում ներառված «TORRO» և «TORO» բառերը, որոնք ունեն ձայնային նմանություն, չնայած առանձին տարբերությունների, այն է՝ կրկնակի (RR) տառերի, որոնք էական դեր չեն կատարում ապրանքային նշանի բառային տարրի ընկալման հարցում: Ինչ վերաբերում է «EL» մասնիկին, ապա այն հանդիսանում է որոշիչ հոդ: Ինչ վերաբերում է կրկնական փորձաքննություն անցկացնելու մասին դիմումի մեջ Ձեր կողմից նշված այն փաստարկին, թե ««EL TORRO» տարրը հանդիսանում է չպահպանվող տարր», ինչի մասին նաև նշում եք կատարել հայտի 5.12-րդ կետում, ապա տեղեկացնում ենք, որ վերը նշված բառն Օրենքի 9-րդ հոդվածի հիմքերով չի կարող հանդիսանալ դիսկլամացվող տարր, քանի որ «TORRO»-ն թե՛ հնչում և թե՛ ընկալվում է որպես «TORO» բառը, սակայն իմաստային նշանակություն չունի և չի կարող դիտարկվել որպես ցուլի մսի բար, հետևաբար չունի նկարագրական բնույթ հայտարկված ծառայությունների համար, ի տարբերություն նիշում առկա այլ բառային տարրերի՝ «THE MEAT BAR» և «MEAT LOVERS RESTAURANT» արտահայտությունների, և նշանի մեջ իր զբաղեցրած դիրքով ընկալվում է որպես առևտրային անվանում: Անդրադառնալով այն փաստարկին, թե հայտատուն արդեն իսկ ունի գրանցված և պատկերային իմաստով նույնական ապրանքային նշան (N 31395), ապա ցանկանում ենք տեղեկացնել, որ համաձայն Կարգի վերը նշված 132-րդ կետի համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցն առանձին վերցված: Ուստի հայտարկված և հակադրված ապրանքային նշաններում շփոթելու աստիճան նման տարրեր են հանդիսանում «TORRO» և «TORO» բառային տարրերը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ

կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը շփոթելու աստիճան նման է նույնատիպ ծառայությունների համար Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող «TORO SPANISH SPIRIT» (RICO FOODS S.L., C.C. Guadalmina Alta, Blq Barclays Bank, 1a planta, 29678 San Pedro de Alcantra Malaga, Spain (ES), N 22045, 10.10.2014թ.) համակցված ապրանքային նշանին:

Բողոքարկողի ներկայացուցիչը ներկա չէր նիստին:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Մերժել լիազորված անձ Սամվել Ալեքսանյանի կողմից ներկայացված «EL TORRO THE MEAT BAR» (No20201741) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ